ՀԱՎԱՍԱՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՊԱՀՈՎՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ
ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ԲԱԺՆԻ
ՊԵՏ ԱՆՆԱ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2026 թվականի մարտի 1-ից մինչև 2026 թվականի մարտի 31-ը ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի փորձագետ Մարինա Մանուկյանի՝ պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերաբերյալ:

1. Լրամշակման մեջ է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2022 թվականի օգոստոսի 11-ի N 1264-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը՝ հաշվի առնելով աշխատանքային պայմանագրերի թվայնացման գործընթացը:
2. Անձնական օգնականի ծառայության շրջանակում կնքված պայմանագրեր՝ 2024 թվականի ընթացքում անձնական օգնականի ծառայությունից օգտվել է շուրջ 100 շահառու, իսկ 2025 թվականի պետական բյուջեի վերաբաշխման արդյունքում ևս 115 շահառուի հնարավորություն է ընձեռնվել ստանալ այդ ծառայությունը: 2026 թվականին անձնական օգնականի ծառայություն ստանալու հնարավորություն կունենա ընդհանուր առմամբ 300 շահառու՝ ՀՀ բոլոր մարզերում և Երևանում: Շահառուների թվի ավելացումը կրում է շարունակական բնույթ:
3. Նախաձեռնվում է «ՀՀ կառավարության 2024 թվականի հունիսի 27-ի N 1004-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի մշակում՝ հաշվի առնելով հաշմանդամություն ունեցող անձանց աջակցող միջոցների տրամադրման թվայնացման գործընթացի մեկնարկը:
4. Ապաինստիտուցիոնալացման համատեքստում Հայաստանում կառուցվում և վերանորոգվում են համայնքային փոքր խմբային տներ՝ հաշմանդամություն ունեցող անձանց մշտական բնակության նպատակով: Մասնավորապես, անմիջական մասնակցություն ունեմ ՀՀ Արմավիրի մարզի Գեղակերտ, Ակնաշեն, Մրգաստան համայնքներում ստեղծվող փոքր տների վերակառուցման և գործունեության

կազմակերպման աշխատանքներին: Ակնաշենի համայնքային փոքր խմբային տունն արդեն իսկ պատրաստ է շահագործման: Մրգաստանի նախագիծը գտնվում է լրամշակումների փուլում:

5. Մասնակցել եմ Եվրոպական միության կողմից ֆինանսավորվող «Հավասարության և մատչելիության ապահովում հաշմանդամություն ունեցող անձանց համար» ծրագրի շրջանակում կազմակերպվող տեխնիկական աջակցության առցանց հանդիպումներին որպես ՀՀ ԱՍՀ նախարարության ներկայացուցիչ և եվրոպացի գործընկերներին ներկայացրել եմ ՀՀ քաղաքականությունը և օրենսդրությունը՝ ուղղված հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերին:

6. Պատասխանել եմ քաղաքացիների դիմում-բողոքներին: Ներկայացված դիմում-բողոքները մանրամասն ուսումնասիրվել են, տրամադրվել են համապատասխան պարզաբանումներ և ուղղորդումներ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների և արտոնությունների, անձնական օգնականի ծառայության և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ:

7. Հաշմանդամություն ունեցող անձանց հիմնահարցերի բաժնի պետի հանձնարարությամբ ուղարկել եմ տարաբնույթ գրություններ տարբեր գերատեսչություններին, մարմիններին, տեղային և միջազգային կազմակերպություններին:

Փորձագետ՝ Մարինա Մանուկյան

08.04.2026թ.

Գլխավոր մասնագետ